Հավելված N 415
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 23-32.8-Մ4-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների քաղաքականության մշակման աշխատանքներին.
2. մասնակցում է ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ շրջանակներում ոլորտային համաձայնագրերի և պայմանագրերի վավերացմանն ու ոլորտային կառույցների հետ հուշագրերի կնքման ուղղված աշխատանքներին.
3. մասնակցում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման ոլորտների քաղաքականության մշակման գործընթացում Նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կառույցների հետ համագործակցությանն ուղղված աշխատանքներին.
4. մասնակցում է չափագիտության և ստանդարտացման, հավատարմագրման ազգային մարմինների գործունեության համակարգման աշխատանքներին և դրանց մշտադիտարկմանը.
5. մասնակցում է Հայաստանի Հանրապետության և ԵԱՏՄ, ԵՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերով (դրանց առկայության դեպքում) նախատեսված որակի

ենթակառուցվածքի համակարգի ոլորտներում օրենսդրությունների մեջ առկա հակասությունների բացահայտման և հնարավոր լուծումների առաջադրման աշխատանքներին.

6. մասնակցում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում միջազգային համագործակցության աշխատանքներին.

7. մասնակցում է ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի մշակման և դրանց վերաբերյալ սահմանված կարգով առաջարկությունների ներկայացման աշխատանքներին.

8. մասնակցում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակվող, համապատասխան ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկումներին.

9. մասնակցում է պետության կողմից կանոնակարգվող ոլորտներում համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացի կազմակերպման, նախարարության պաշտոնական կայքում նշանակված համապատասխանության գնահատման մարմինների ցանկի հրապարակման, ցանկի շարունակական արդիականացման, համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի վարման աշխատանքներին.

10. մասնակցում է համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հետ կապված գործընթացի կազմակերպման, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման գրանցամատյանի վարման աշխատանքներին.

11. մասնակցում է արտադրանքի ցուցանիշների չափումների (փորձարկումների) ճշգրիտ արդյունքներ ապահովող էտալոնային (արբիտրաժային կամ ռեֆերենսային) լաբորատորիաների ճանաչմանն ուղղված աշխատանքներին.

12. մասնակցում է ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող՝ ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում գործող իրավական ակտերի պարզաբանման, քննարկման, ինչպես նաև նշված ոլորտներում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով համապատասխան քննարկումների, տեսակոնֆերանսների կազմակերպմանն ուղղված աշխատանքներին.

13. մասնակցում է համապատասխանության գնահատման մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրման աշխատանքներին.

14. մասնակցում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում Նախարարության ենթակայությամբ գործող մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունների հավաքագրման ու ամփոփման, որակական և քանակական վերլուծությունների հիման վրա եզրակացությունների կազմման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրման գործընթացներին.

15. մասնակցում է բաժնի ոլորտներին առնչվող գործառույթների, խնդիրների կարգավորման, դրանց վերաբերյալ մասնագիտական պարզաբանումների, վերլուծությունների, պատասխանների պատրաստման, ըստ անհրաժեշտության համապատասխան քայլերի նախաձեռնման, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքներին.

16. մասնակցում է տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC,IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքման և հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքներին.

17. մասնակցում է ՀՀ-ում հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների էլեկտրոնային համակարգի հետ կապված աշխատանքներին.

18. մասնակցում է ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծմանն ուղղված աշխատանքներին.

19. մասնակցում է փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձարկումների հասանելիության և մատչելիության բարձրացմանը, հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիությանն ուղղված աշխատանքներին.

20. մասնակցում է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման համար սահմանված ժամկետում հավատարմագրման և ստանդարտների մշակման մասով պայմանագրերի մշակման և հաստատման, ազգային մարմինների կողմից հաշվետվությունների ընդունման, եզրակացությունների պատրաստման աշխատանքներին.

21. մասնակցում է ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի նախապատրաստման և ներկայացման աշխատանքներին.

22. մասնակցում է Համաշխարհային բանկի վարկային ծրագրի, ԵՄ (CEPA, OIML, PTB) շրջանակներում սահմանված բաղադրիչների մասով միջոցառումների համակարգման աշխատանքներին.

23. մասնակցում է Ստանդարտների ամենամյա ծրագրի մշակման և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատման ներկայացման աշխատանքներին:

Իրավունքները՝

- ստանալ ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, ոլորտներում իրականացվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակման հետ կապված փաստաթղթեր և հիմնավորումներ.
- ստանալ տեղեկատվություն ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման բնագավառներին առնչվող իրավական ակտերի

նախագծերի, գրությունների, առաջարկությունների, եզրակացությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, ուղեցույցերի և այլ փաստաթղթերի նախապատրաստման, պետական քաղաքականության իրականացման օրենսդրական ակտերի նախագծերի մշակման հետ կապված.

- մասնակցել ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման ոլորտներին առնչվող սպառողների շահերի իրավունքների պաշտպանության հարցերով քննարկումներին և ժողովներին.
- հրավիրել քննարկումներ մասնագիտական կարծիքներ ստանալու նպատակով:

Պարտականությունները՝

- աջակցել ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների միջազգային համակարգերին ինտեգրման աշխատանքների վերաբերյալ համապատասխան եզրակացությունների կազմման աշխատանքների իրականացմանը.
- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին անդամակցելու արդյունքում առաջացող տեխնիկական խոչընդոտները, բացահայտել առկա տարբերությունները և ներկայացնել առաջարկություններ.
- նախապատրաստել եզրակացություններ Բաժնի ոլորտներին առնչվող գործառույթների վերաբերյալ մասնագիտական.
- աջակցել որակական և քանակական վերլուծությունների հիման վրա եզրակացությունների կազմանը.
- նախապատրաստել հաշվետվություններ ստանդարտների մշակման պետական ամենամյա ծրագրով սահմանված ստանդարտների մշակման գործընթացի վերաբերյալ.
- նախապատրաստել ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրեր և բյուջետային հայտեր.
- ուսումնասիրել ոլորտի օրենսդրությունները, համադրել ՀՀ գործող իրավական կարգավորումների հետ և բացահայտել առկա տարբերությունները.
- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության նախարարությունների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակվող, համապատասխան ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերը.
- տրամադրել տեղեկատվություն ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող՝ ստանդարտացման, հավատարմագրման և չափումների միասնականության ապահովման ոլորտներում գործող իրավական ակտերի վերաբերյալ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական

աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: